



EUROPEAN COURT OF HUMAN RIGHTS
COUR EUROPÉENNE DES DROITS DE L'HOMME

ԵՐՐՈՐԴ ԲԱԺԱՆՄՈՒՆՔ

ՄԱԼԽԱՍՅԱՆՆ ԸՆԴԴԵՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ

(Գանգատ թիվ 6729/07)

ՎՃԻՌ

ՍՏՐԱՍԲՈՒՐԳ

26 հունիսի 2012

ՎԵՐՋՆԱԿԱՆ
26/09/2012

Սույն վճիռը վերջնական է դարձել Կոնվենցիայի 44-րդ հոդվածի 2-րդ կետի համաձայն: Այն կարող է ենթարկվել խմբագրական փոփոխությունների:



Մալխասյանն ընդդեմ Հայաստանի գործով,

Մարդու իրավունքների եվրոպական դատարանի (Երրորդ Բաժանմունք) Պալատը,
 հետևյալ կազմով՝

Josep Casadevall, *Նախագահ,*

Corneliu Bîrsan,

Alvina Gyulumyan,

Egbert Myjer,

Ján Šikuta,

Luis López Guerra,

Nona Tsotsoria, *դատավորներ,*

և Santiago Quesada, *Բաժանմունքի քարտուղար,*

2012 թվականի հունիսի 5-ին դռնփակ նիստում,

կայացրեց հետևյալ վճիռը, որն ընդունվեց նույն օրը:

ԸՆԹԱՑԱԿԱՐԳԸ

1. Վարույթը հարուցվել է 2007 թվականի փետրվարի 8-ին Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին կոնվենցիայի («Կոնվենցիա») 34-րդ հոդվածի համաձայն, Հայաստանի Հանրապետության քաղաքացի պրն. Վարդան Մալխասյանի («Դիմումատու») կողմից ընդդեմ Հայաստանի Հանրապետության բերված թիվ 6729/07 գանգատի հիման վրա:

2. Դիմումատուին ներկայացրել են Երևանում գործող փաստաբաններ՝ պարոն Ա. Շուշանյանը և պարոն Մ. Շուշանյանը: Հայաստանի Հանրապետության կառավարությունը («Կառավարություն») ներկայացրել է Մարդու իրավունքների եվրոպական դատարանում Հայաստանի Հանրապետության լիազոր ներկայացուցիչ, պրն Գ. Կոստանյանը:

3. Դիմումատուն մասնավորապես պնդել է, որ 2007 թվականի հունիսի 10-ից 22-ն ընկած ժամանակահատվածում իր կալանավորումը եղել է ոչ իրավաչափ և դատարանները չեն ներկայացրել իրեն շարունակաբար կալանքի տակ պահելու պատճառները:

4. 2010 թվականի հունվարի 21-ին գանգատն ուղարկվել է Կառավարություն: Որոշվել է նաև իրականացնել գործի ընդունելիության և ըստ էության միաժամանակյա քննություն (հոդված 29, կետ 1):

ՓԱՍՏԵՐԸ

I. ԳՈՐԾԻ ՓԱՍՏԱԿԱՆ ՀԱՆԳԱՄԱՆՔՆԵՐԸ

5. Դիմումատուն ծնվել է 1953 թվականին և ապրում է Երևանում:

Ա. դիմումատուի դեմ հարուցված քրեական վարույթը, նրա ձերբակալումն ու կալանավորումը

6. 2006 թվականի դեկտեմբերի 2-ին դիմումատուն ելույթ է ունեցել «Հայ կամավորների միություն» ՀԿ-ի կողմից կազմակերպված հավաքում: Հավաքը տեղի է ունեցել Երևանի պարարվեստի պետական քոլեջի դահլիճում և դրան մասնակցել է մոտ 150 մարդ: Իր ելույթի մեջ դիմումատուն իշխանություններին կոչել է «ավազակներ և ժողովրդի ներքին թշնամիներ, որոնցից պետք է ազատվել ցանկացած միջոցով, այդ թվում՝ զենքի, զինված պայքարի և ապստամբության»: Նա կոչ է արել արյուն և կրակ թափել թշնամու վրա և պնդել է, որ այլևս վերլուծելու, քննարկելու, մեկնաբանություններ անելու կամ փորձագետների լսելու կարիք չկա: «Երկիրը պետք է ազատագրվի ներքին թշնամուց»:

7. 2006 թվականի դեկտեմբերի 8-ին Ազգային անվտանգության ծառայության (ԱԱԾ) քննչական վարչությունը որոշում է կայացրել ՔՕ-ի 301-րդ հոդվածով քրեական վարույթ հարուցելու մասին՝ վերոնշյալ հավաքի ժամանակ հնչած ելույթներում իշխանությունը բռնի տապալելուն ուղղված հրապարակային կոչեր անելու փաստի առթիվ:

8. 2008 թվականի դեկտեմբերի 9-ին ժամը 21:35-ից մինչև 23:55-ը դիմումատուի բնակարանը խուզարկվել է վերջինիս ներկայությամբ: Դիմումատուն պնդում է, որ խուզարկությունից անմիջապես հետո իրեն տարել են ԱԱԾ:

9. 2006 թվականի դեկտեմբերի 10-ին ժամը 10:05-ից մինչև 13:15-ը դիմումատուն հարցաքննվել է որպես կասկածյալ ԱԱԾ-ի թիվ 487 գրասենյակում: Ստացվում է, որ դիմումատուն ընդունել է հավաքի ժամանակ, իր կողմից, վերը նշված հայտարարությունների կատարումը:

10. Նույն օրը ժամը 14:30-ին կազմվել է ձերբակալման արձանագրություն, որում նշված էր, որ դիմումատուն քննիչի կողմից ձերբակալվել է այդ ժամին ԱԱԾ-ի թիվ 487 գրասենյակում՝ վերոնշյալ հանցանգործության մեջ ներգրավված լինելու կասկածանքով: Պարզվում է, որ դիմումատուի անձնագիրն առգրավվել է:

11. 2006 թվականի դեկտեմբերի 12-ին դիմումատուին պաշտոնապես մեղադրանք է առաջադրվել ՔՕ-ի 301-րդ հոդվածի հատկանիշներով՝ իշխանությունը բռնի զավթելուն ուղղված հրապարակային կոչեր անելու հիմքով: Մեկ այլ անձ՝ Ջ. Ս.-ն, ով ևս ելույթ է ունեցել վերոհիշյալ հավաքում, դիմումատուի հետ միասին մեղադրվել է ՔՕ-ի 301-րդ հոդվածով, ինչպես նաև 235-րդ հոդվածի 1-ին մասով՝ ապօրինի կերպով զենք, ռազմամթերք կրելը (պահելը): Նրանց ելույթները ձայնագրվել էին:

12. Նույն օրը դիմումատուն հարցաքննվել է որպես մեղադրյալ: Դիմումատուն պնդել է, որ քննարկվող հայտարարություններն արել է ոգելից

խմիչքի ազդեցության տակ և շփոթվաշ վիճակում: Դրանք արվել են պահի ազդեցության տակ և ինքը նպատակ չի ունեցել որևէ մեկին հրահրել ապստամբության կամ բռնի կերպով տապալել իշխանությունը:

13. Նույն օրը քննիչը միջնորդություն է ներկայացրել Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների առաջին ատյանի դատարան՝ դիմումատուին երկամսյա ժամկետով կալանավորելու վերաբերյալ, պնդելով, որ դիմումատուն, ազատության մեջ մնալով, կարող է թաքնվել քրեական վարույթն իրականացնող մարմնից և անօրինական ազդեցություն գործադրել դատավարության մեջ ներգրավված անձանց նկատմամբ: Դիմումատուն պնդել է, որ քննիչը դատարան է ներկայացրել միայն իր ելույթի վերծանումը, բայց ոչ դրա ձայնագրությունը, նույնիսկ այն դեպքում, երբ նման ձայնագրությունը գտնվում էր քննիչի տրամադրության տակ:

14. Նույն օրը առաջին ատյանի դատարանը քննել է քննիչի ներկայացրած միջնորդությունը: Դիմումատուն, ով ներկա է եղել այս նիստին, առարկել է միջնորդության դեմ, պնդելով, որ ինքը ամբողջովին չի գիտակցել իր խոսքերի իմաստը, քանի որ գտնվել է ոգելից խմիչքի և վրդովմունքի ազդեցության տակ, որը նույն օրը՝ ավելի վաղ, տեղի ունեցած ընտանեկան վեճի հետևանք էր: Առաջին ատյանի դատարանը, քննելով դիմումատուի դեմ ներկայացված մեղադրանքի հիմքում ընկած հանգամանքները, որոշում է կայացրել բավարարել քննիչի ներկայացրած միջնորդությունը՝ հիմք ընդունելով այն հանգամանքը, որ դիմումատուն, ազատության մեջ մնալով, կարող է խոչընդոտել մինչդատական վարույթում գործի քննությանը՝ դատավարության մեջ ներգրավված անձանց վրա ոչ իրավաչափ ազդեցություն գործադրելու ճանապարհով:

15. 2006 թվականի դեկտեմբերի 19-ին դիմումատուն բողոք է ներկայացրել այս որոշման դեմ, պնդելով, որ այն անհիմն է, անօրինական և չպատճառաբանված:

16. 2006 թվականի դեկտեմբերի 26-ին դիմումատուն լրացրել է իր բողոքը, պնդելով *inter alia*, որ քննիչը դատարան որևէ ապացույց չի ներկայացրել, ի հիմնավորումն իր պնդմանն այն մասին, որ ինքը կարող էր թաքնվել քրեական վարույթն իրականացնող մարմնից կամ խոչընդոտել մինչդատական վարույթում գործի քննությանը: Պնդումն առ այն, որ ինքը կարող էր խոչընդոտել մինչդատական վարույթում գործի քննությանը հերքվում էր այն փաստով, որ վարույթն իրականացնող մարմինն իր տրամադրության տակ ուներ դիմումատուի ելույթի ձայնագրությունը: Նման հանգամանքներում դիմումատուի համար անհնարին էր որևէ կերպ խոչընդոտել մինչդատական վարույթում գործի քննությանը: Դատարանն, այնուամենայնիվ, հաշվի չի առել այդ փաստը: Դիմումատուն այնուհետև պնդել է, որ դատարանի որոշումը՝ նրա հանցանք կատարելու վերաբերյալ, պետք է հիմնված լիներ հիմնավոր կասկածի վրա:

17. Նույն օրը Քրեական և զինվորական գործերով վերաքննիչ դատարանը քննել և մերժել է բողոքը: Վերաքննիչ դատարանը գտել է, որ քննիչը բավարար ապացույցներ է ներկայացրել,ինչպիսիք են՝ դիմումատուի 2006 թվականի դեկտեմբերի 10-ի և 12-ի հարցաքննությունների արձանագրությունները, որոնք դիմումատուին կապում են քննարկվող հարցի հիմքում ընկած իրադարձությունների հետ, ինչպես նաև ենթադրում են հիմնավոր կասկածի առկայությունը: Բացի այդ առաջին ատյանի դատարանը օրինական կերպով համարել է, որ բավարար հիմքեր կային ենթադրելու, որ դիմումատուն, ազատության մեջ գտնվելով, կարող է խոչընդոտել մինչդատական վարույթում գործի քննությանը:

18. 2006 թվականի դեկտեմբերի 27-ին դիմումատուն միջնորդություն է ներկայացրել առաջին ատյանի դատարան՝ փորձելով գրավի դիմաց ազատ արձակվել: Նա պնդել է, որ վարույթն իրականացնող մարմինն իրեն ճանաչում է, ինքն ունի մշտական բնակության վայր և երբեք չի խուսափել քննությունից:

19. 2006 թվականի դեկտեմբերի 30-ին, նույն քրեական գործի շրջանակներում, մեկ այլ անձի՝ Վ. Ա.-ի, ով Զ. Ս.-ի ընկերն էր, հանդես ևս մեղադրանք է առաջադրվել ՔՕ-ի 235-րդ հոդվածի 1-ին մասով՝ ապօրինի կերպով զենք, ռազմամթերք կրելը (պահելը):

20. 2007 թվականի հունվարի 26-ին առաջին ատյանի դատարանը մերժել է դիմումատուի միջնորդությունը՝ այն հիմքով, որ վերջինս, ազատության մեջ մնալով, կարող է թաքնվել քրեական վարույթն իրականացնող մարմնից:

21. Նույն օրը դիմումատուն բողոք է ներկայացրել այդ որոշման դեմ, պնդելով, որ այն անհիմն է, անօրինական և չպատճառաբանված:

22. 2007 թվականի փետրվարի 15-ին Քրեական և զինվորական գործերով վերաքննիչ դատարանը մերժել է բողոքը՝ համարելով, որ բավարար հիմքեր չկան դիմումատուին գրավի դիմաց ազատ արձակելու համար, նկատի ունենալով այն հանգամանքը, որ միևնույն քրեական գործի շրջանակներում դիմումատուի հանցակից Վ. Ա.-ն կասկածվել, այնուհետև կալանավորվել է խոշոր չափերով զենք և ռազմամթերք ապօրինաբար կրելու (պահելու) համար, ինչպես նաև հաշվի առնելով դիմումատուին մեղսագրվող արարքի բնույթն ու վտանգավորության աստիճանը:

Բ. Դիմումատուի կալանքի ժամկետի երկարացումը

23. 2007 թվականի փետրվարի 1-ին քննիչը միջնորդություն է ներկայացրել առաջին ատյանի դատարան՝ փորձելով երկարացնել դիմումատուին կալանքի տակ պահելու ժամկետը, որը լրանում էր 2007 թվականի փետրվարի 10-ին, ևս երկու ամսով՝ միևնույն հիմքերով:

24. 2007 թվականի փետրվարի 7-ին դիմումատուն առարկություն է ներկայացրել այդ միջնորդության դեմ: Նա պնդել է, որ քննիչը որևէ

ապացույց չի ներկայացրել ի հաստատումն այն պնդումների, որ ինքը կթաքնվի քրեական վարույթ իրականացնող մարմնից կամ կխոչընդոտի մինչդատական վարույթում գործի քննությանը: Այնուամենայնիվ, պնդումը, որ ինքը կարող էր թաքնվել քրեական վարույթն իրականացնող մարմնից չի հաստատվել, քանի որ դիմումատուն ունի մեծ ընտանիք և սեփականություն Հայաստանում և իր անձնագիրն առգրավվել էր: Բացի այդ, այդ պնդումը չէր հաստատվել առաջին ատյանի դատարանի 2006 թվականի դեկտեմբերի 12-ի որոշմամբ: Ինչ վերաբերում է այն պնդմանը, որ ինքը կարող է խոչընդոտել մինչդատական վարույթում գործի քննությանը, ապա դա հերքվել է այն փաստով, որ քննություն իրականացնող մարմինն իր տրամադրության տակ ուներ դիմումատուի ելույթի ձայնագրությունը: Դիմումատուն խնդրել է իրեն գրավի դիմաց ազատ արձակել:

25. Նույն օրը առաջին ատյանի դատարանը քննել է քննիչի միջնորդությունը: Դիմումատուի պաշտպանը ներկա է եղել այդ նիստին և հանդես է եկել փաստարկներով: Նա դատարան միջնորդություն է ներկայացրել, պնդելով, որ անհրաժեշտ է դիմումատուի ներկայությունը նիստին և պահանջել է, որ ապահովվի նրա ներկայությունը: Նախագահող դատավորը պաշտպանին հարցրել է՝ արդյո՞ք դիմումատուն ցանկություն է հայտնել ներկա գտնվել նիստին, ինչին պաշտպանը պատասխանել է, որ ինքը ենթադրում է, որ դիմումատուն կցանկանա ներկա գտնվել: Նախագահող դատավորը որոշել է մերժել այդ միջնորդությունը՝ հիմք ընդունելով այն հանգամանքը, որ նման պահանջ չի առաջադրվել մինչ նիստը, և որ օրենքը պարտադիր չի համարում կալանավորի ներկայությունը կալանքի տակ պահելու ժամկետը երկարացնելու միջնորդության քննությանը:

26. Առաջին ատյանի դատարանը որոշում է կայացրել բավարարել քննիչի միջնորդությունը՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ մի շարք քննչական գործողությունների իրականացման անհրաժեշտություն կա, ինչպիսիք են Հայաստանի կամավորների միության անդամների հարցաքննությունը, մի շարք փորձաքննություններ ավարտին հասցնելը և Վ. Ա.-ի տիրապետման տակ գտնվող զենքի և ռազմամթերքի ձեռքբերման սկզբնաղբյուրի բացահայտումը և համարելով, որ դիմումատուն, ազատության մեջ գտնվելով, կարող է թաքնվել քրեական վարույթն իրականացնող մարմնից և խոչընդոտել մինչդատական վարույթում գործի քննությանը՝ դատաքննության մեջ ներգրավված անձանց վրա անօրինական ազդեցություն գործադրելու ճանապահով:

27. 2007 թվականի փետրվարի 8-ին դիմումատուն բողոք է ներկայացրել այդ որոշման դեմ:

28. 2007 թվականի մարտի 1-ին դիմումատուն լրացրել է իր բողոքը, պնդելով, *inter alia*, որ ՔԴՕ-ի 139-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված՝ կալանքի ժամկետը երկարացնելու ընթացակարգը, քննիչի և առաջին ատյանի դատարանի կողմից չի պահպանվել, և որ ինքը ներկա չի եղել 2007

թվականի փետրվարի 7-ին կայացած նիստին, ինչը ՔԴՕ-ի 285-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված երաշխիքների խախտում է: Ինչ վերաբերում է, մասնավորապես, ժամկետներին, որոնք սահմանված են ՔԴՕ-ի 139-րդ հոդվածի 1-ին մասով, դիմումատուն պնդել է, որ իր կալանքի ժամկետը պետք է հաշվարկվեր սկսած 2007 թվականի դեկտեմբերի 9-ից, քանի որ դա այն օրն էր, երբ իրեն փաստացիորեն զրկել են ազատությունից և ոչ այն օրից, երբ կայացվել է ձերբակալման որոշումը, այն է՝ 2007 թվականի դեկտեմբերի 10-ը: Դիմումատուն այնուհետև պնդել է, որ առաջին ատյանի դատարանի որոշումը պատճառաբանված չէր և իրեն շարունակաբար կալանքի տակ պահելը արդարացված չէր՝ փաստարկելով միևնույն պնդումները, որոնք ինքը ներկայացրել էր 2007 թվականի փետրվարի 7-ի առարկության մեջ:

29. Նույն օրը վերաքննիչ դատարանը որոշում է կայացրել մերժել բողոքը և ուժի մեջ թողնել առաջին ատյանի դատարանի որոշումը՝ գտնելով, որ դիմումատուի բերած փաստարկները անհիմն են: Ինչ վերաբերում է ՔԴՕ-ի 139-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված ժամկետներին, վերաքննիչ դատարանը ընդունել է, որ դրանք չեն ուսումնասիրվել ինչպես քննիչի, այնպես էլ առաջին ատյանի դատարանի կողմից, այնուամենայնիվ, դա այնպիսի կարևորության դատավարական խախտում չի եղել, որը կարող էր ազդել կալանքի տակ պահելու ժամկետի երկարացման վերաբերյալ նիստի պատշաճ ելքի վրա: Դիմումատուի պաշտպանը ներկա էր այդ նիստին և փաստարկներ է ներկայացրել::

30. 2007 թվականի մարտի 30-ին քննիչը միջնորդություն է ներկայացել առաջին ատյանի դատարան՝ փորձելով երկարացնել դիմումատուին կալանքի տակ պահելու ժամկետը, որը լրանում էր 2007 թվականի ապրիլի 10-ին, ևս երկու ամսով՝ միևնույն հիմքերով:

31. 2007 թվականի ապրիլի 3-ին համապատասխան ընտրական հանձնաժողովը դիմումատուին՝ իր դիմումի հիման վրա, գրանցել է որպես մեծամասնական ընտրակարգով թեկնածու՝ Հայաստանում 2007 թվականի մայիսի 12-ին կայանալիք խորհրդարանական ընտրություններում:

32. 2007 թվականի ապրիլի 5-ին առաջին ատյանի դատարանը բավարարել է քննիչի 2007 թվականի մարտի 30-ի միջնորդությունը՝ միևնույն հիմքերով, ինչ՝ նախկինում: Դիմումատուի պաշտպանը ներկա է եղել այդ նիստին և փաստարկներ է ներկայացրել:

33. 2007 թվականի ապրիլի 10-ին դիմումատուն բողոք է ներկայացրել այս որոշման դեմ, պնդելով, *inter alia*, որ իրեն կալանքի տակ պահելու ժամկետը երկարացվել է առանց Կենտրոնական ընտրական հանձնաժողովի համաձայնության, ինչը հանդիսանում է ընտրական օրենսգրքի 111-րդ հոդվածի 6-րդ մասի խախտում: Դիմումատուն, այնուհետև, պնդել է, որ կալանավորված լինելու հետևանքով ինքը զրկված է եղել այլ թեկնածուների հետ հավասար պայմաններում նախընտրական քարոզարշավին մասնակցելու հնարավորությունից: Նա նաև 2007 թվականի փետրվարի 7-ի

առարկություններում և 2007 թվականի մարտի 1-ի լրացումներում արված պնդումներին համանման պնդումներ է արել:

34. 2007 թվականի մայիսի 2-ին Վերաքննիչ դատարանը որոշում է կայացրել մերժել բողոքը և ուժի մեջ թողնել առաջին ատյանի դատարանի որոշումը: Վերաքննիչ դատարանը համարել է, *inter alia*, որ ՔԴՕ-ի 285-րդ հոդվածի և Ընտրական օրենսգրքի 111-րդ հոդվածի 6-րդ մասի պահանջները պահպանվել են, քանի որ կալանքի՝ որպես խափանման միջոց կիրառումը, և կալանքի տակ պահելու ժամկետի երկարացումը երկու տարբեր հասկացություններ են: Դիմումատուի նկատմամբ կալանքը՝ որպես խափանման միջոց, կիրառվել է ավելի վաղ, քան նրա գրանցումը որպես խորհրդարանական ընտրությունների թեկնածու: Վերաքննիչ դատարանը այնուհետև համարել է, որ քննիչի կողմից վկայակոչված հիմքերը՝ դիմումատուին կալանքի տակ պահելը շարունակելու օգտին, ուժի մեջ են: Դիմումատուի պաշտպանը ներկա է եղել նիստին և փաստարկներ է ներկայացրել:

35. 2007 թվականի հունիսի 5-ին դատախազը հաստատել է մեղադրական եզրակացությունը և գործն ուղարկել է դատարան՝ ըստ էության քննության:

36. 2007 թվականի հունիսի 7-ին Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների առաջին ատյանի դատարանի դատավոր Մ-ն որոշում է կայացրել դիմումատուի դեմ հարուցված քրեական գործը վարույթ ընդունելու վերաբերյալ:

37. 2007 թվականի հունիսի 10-ին լրացել էր դիմումատուին կալանքի տակ պահելու ժամկետը, որը սահմանվել էր 2007 թվականի ապրիլի 5-ին կայացված որոշմամբ:

38. 2007 թվականի հունիսի 13-ին դիմումատուն դիմել է քրեակատարողական հիմնարկի պետին, որտեղ ինքը կալանքի տակ էր պահվում՝ պնդելով, որ իրեն կալանքի տակ պահելու ժամկետը, որը սահմանվել էր առաջին ատյանի դատարանի 2007 թվականի ապրիլի 5-ի որոշմամբ, լրացել է 2007 թվականի հունիսի 10-ին, և ինքը պետք է ազատ արձակվի:

39. 2007 թվականի հունիսի 19-ին քրեակատարողական հիմնարկի պետը իր գրությամբ մերժել է այդ պահանջը՝ հիմք ընդունելով այն հանգամանքը, որ գործն ուղարկվել է առաջին ատյանի դատարան:

40. 2007 թվականի հունիսի 22-ին դատավոր Մ-ն որոշում է կայացրել դիմումատուի նկատմամբ հարուցված քրեական գործը քննության առնելու վերաբերյալ: Այս որոշմամբ հաստատվել է այն, որ դիմումատուի նկատմամբ կիրառված խափանման միջոցը պետք է մնա անփոփոխ:

41. 2007 թվականի օգոստոսի 6-ին Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների առաջին ատյանի դատարանը դիմումատուին ճանաչել է մեղավոր՝ իրեն մեղսագրվող հանցագործության մեջ և դատապարտել է երկու տարվա ազատազրկման:

42. 2007 թվականի օգոստոսի 7-ին դիմումատուն գանգատ է ներկայացրել Դատարան:

43. Պարզվում է, որ այդուհետ դիմումատուն իր նկատմամբ կայացված մեղադրական դատավճիռը վիճարկել է ավելի բարձր դատական ատյաններում:

II. ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ ՆԵՐՊԵՏԱԿԱՆ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅՈՒՆԸ

Ա. Քրեական օրենսգիրք (ուժի մեջ է 2003 թվականի օգոստոսի 1-ից)

44. Քրեական օրենսգրքի համապատասխան դրույթները սահմանում են.

Հոդված 301. Սահմանադրական կարգը բռնի տապալելուն ուղղված հրապարակային կոչերը

«Իշխանությունը զավթելուն կամ սահմանադրական կարգը բռնի տապալելուն ուղղված հրապարակային կոչերը՝

պատժվում են տուգանքով՝ նվազագույն աշխատավարձի երեքհարյուրապատիկից հինգհարյուրապատիկի չափով, կամ կալանքով՝ երկուսից երեք ամիս ժամկետով, կամ ազատազրկմամբ՝ առավելագույնը երեք տարի ժամկետով:»

Բ. Քրեական դատավարության օրենսգիրք (ուժի մեջ է մտել 1999 թվականի հունվարի 12-ից)

45. Կիրառելի դրույթների ամբողջությունը տե՛ս *Պողոսյանն ընդդեմ Հայաստանի* գործով (թիվ 44068/07 §§ 26-41, 2011 թվականի դեկտեմբերի 20) որոշման մեջ: ՔԴՕ-ի այն դրույթները, որոնք վկայակոչված չեն նշված որոշման մեջ, սահմանում են հետևյալը.

46. 135-րդ հոդվածի համաձայն՝ դատարանը, դատախազը, քննիչը կամ հետաքննություն իրականացնող մարմինը խափանման միջոց կարող են կիրառել միայն այն դեպքում, երբ քրեական գործով ձեռք բերված նյութերը բավարար հիմք են տալիս ենթադրելու, որ կասկածյալը կամ մեղադրյալը կարող է. (1) թաքնվել քրեական վարույթն իրականացնող մարմնից, (2) խոչընդոտել մինչդատական վարույթում կամ դատարանում գործի քննությանը՝ քրեական դատավարությանը մասնակցող անձանց վրա անօրինական ազդեցություն գործադրելու, գործի համար նշանակություն ունեցող նյութերը թաքցնելու կամ կեղծելու, քրեական վարույթն իրականացնող մարմնի կանչով առանց հարգելի պատճառների չներկայացնելու կամ այլ ճանապարհով, (3) կատարել քրեական օրենքով չթույլատրված արարք (4) խուսափել քրեական պատասխանատվությունից և

նշանակված պատիժը կրելուց, (5) խոչընդոտել դատարանի դատավճռի կատարմանը: Խափանման միջոց կիրառելու անհրաժեշտության և կասկածյալի կամ մեղադրյալի նկատմամբ դրա տեսակն ընտրելու հարցը լուծելիս հաշվի են առնվում՝ (1) վերագրվող արարքի բնույթը և վտանգավորության աստիճանը, (2) կասկածյալի կամ մեղադրյալի անձը, (3) տարիքը և առողջական վիճակը, (4) սեռը, (5) զբաղմունքի տեսակը, (6) ընտանեկան դրությունը և խնամակալների առկայությունը, (7) գույքային դրությունը, (8) բնակության մշտական վայրի առկայությունը և (9) այլ էական հանգամանքներ:

47. 139-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ մեղադրյալին կալանքի տակ պահելու ժամկետը երկարացնելու անհրաժեշտության դեպքում քննիչը կամ դատախազը պետք է դատարան ներկայացնեն պատճառաբանված միջնորդություն ոչ ուշ, քան կալանքի տակ պահելու ժամկետը լրանալուց 10 օր առաջ: Դատարանը, համաձայնվելով կալանքի տակ պահելու ժամկետը երկարացնելու անհրաժեշտությանը, ոչ ուշ, քան դատարանի կալանքի տակ պահելու որոշած ժամկետը լրանալուց 5 օր առաջ, համապատասխան որոշում է կայացնում:

48. 285-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ կալանքը որպես խափանման միջոց ընտրելու կամ կալանքի տակ պահելու ժամկետը երկարացնելու անհրաժեշտության դեպքում դատախազը կամ քննիչը միջնորդություն է հարուցում դատարան՝ խափանման միջոցի այդ տեսակը ընտրելու կամ կալանքի տակ պահելու ժամկետը երկարացնելու մասին: Միջնորդություն հարուցելու որոշման մեջ պետք է շարադրվեն այն շարժառիթները և հիմքերը, որոնց հիման վրա առաջացել է մեղադրյալին կալանավորելու անհրաժեշտություն: Որոշմանը կցվում են միջնորդության հիմնավորվածությունը հաստատող նյութերը: 285-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ կալանավորումը որպես խափանման միջոց ընտրելու վերաբերյալ միջնորդությունը ենթակա է անհապաղ քննման նախաքննության կատարման վայրի դատարանում, դատավորի կողմից միանձնյա՝ միջնորդություն ներկայացրած անձի, մեղադրյալի, նրա օրինական ներկայացուցչի, պաշտպանի մասնակցությամբ, եթե նա մասնակցում է գործին:

Գ. Ընտրական օրենսգիրք (ուժի մեջ է մտել 1999 թվականի փետրվարի 28-ից)

49. Ընտրական օրենսգրքի 111-րդ հոդվածի 6-րդ մասը սահմանում է, որ ընտրությունների ժամանակահատվածում Ազգային ժողովի համամասնական և մեծամասնական ընտրակարգերով առաջադրված թեկնածուները կարող են կալանավորվել, դատական կարգով վարչական կամ քրեական պատասխանատվության ենթարկվել միայն Կենտրոնական ընտրական հանձնաժողովի համաձայնությամբ:

ԻՐԱՎՈՒՆՔԸ

1. ԿՈՆՎԵՆՑԻԱՅԻ 5-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ 1-ԻՆ ՄԱՍԻ ԵՆԹԱԴՐՅԱԼ ԽԱԽՏՈՒՄ

50. Դիմումատուն բողոքել է, որ 2007 թվականի փետրվարի 7-ին իրեն կալանքի տակ պահելու ժամկետի երկարացման ժամանակ չեն պահպանվել օրենքով սահմանված ժամկետները, և որ 2007 թվականի հունիսի 10-ից 22-ն ընկած ժամանակահատվածում իրեն կալանքի տակ պահելը դատարանի կողմից թույլատրված չի եղել, և ուստի եղել է անօրինական: Նա վկայակոչել է Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 1-ին կետը, որը, համապատասխանաբար, սահմանում է հետևյալը.

«Յուրաքանչյուր ոք ունի ազատության և անձնական անձեռնմխելիության իրավունք: Ոչ ոքի չի կարելի ազատությունից զրկել այլ կերպ, քան հետևյալ դեպքերում և օրենքով սահմանված կարգով:»:

Ա. Ընդունելիությունը

1. *Ներպետական իրավունքով նախատեսված ժամկետների պահպանումը՝ կալանավորման ժամկետը երկարացնելիս.*

(ա) Կողմերի փաստարկները

51. Կառավարությունը պնդել է, որ ՔԴՕ-ի 139-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված 5-օրյա ժամկետը առաջին ատյանի դատարանի կողմից չպահպանելու փաստը, երբ վերջինս 2007 թվականի փետրվարի 7-ին երկարացրել է դիմումատուին կալանքի տակ պահելու ժամկետը, որևէ անբարենպաստ ազդեցություն չի ունեցել դիմումատուի՝ 5-րդ հոդվածի 1-ին կետով երաշխավորված իրավունքների վրա: Համապատասխանան ժամկետներին վերաբերող ձևական անհամապատասխանության հարցը, պայմանավորված դատարանի աշխատակազմի կողմից թույլ տրված որոշակի թերություններով, 5-րդ հոդվածի 1-ին կետի իմաստով չի հանգեցրել դիմումատուին կամայականորեն կալանքի տակ պահելու, քանի որ դիմումատուն արդեն իսկ գտնվում էր կալանքի տակ, և առաջին ատյանի դատարանը որոշել էր, որ այն պետք է մնա անփոփոխ:

52. Դիմումատուն պնդել է, որ կալանքի տակ պահելու ժամկետը պետք է ավարտվեր 2007 թվականի փետրվարի 10-ին, և քննիչն ու առաջին ատյանի դատարանը չեն պահպանել ՔԴՕ-ի 139-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված ժամկետները: Սրանք ներպետական օրենսդրության էական խախտումներ էին և բավարար հիմք՝ առաջին ատյանի դատարանի որոշումը բեկանելու

համար: Բացի այս, քանի որ ներպետական օրենսդրության խախտումը հանգեցնում է 5-րդ հոդվածի 1-ին կետի խախտման, ուստի ժամկետների անհամապատասխանությունը իր գործով հանգեցրել է տվյալ դրույթի խախտման:

(բ) Դատարանի գնահատականը

53. Դատարանը կրկնում է, որ 5-րդ հոդվածի 1-ին կետում առկա «օրինական» և «օրենքով սահմանված կարգով» արտահայտությունները ըստ էության հղում են կատարում ներպետական իրավունքին և ամրագրում են այդ իրավունքի նյութաիրավական և ընթացակարգային պահանջները պահպանելու պարտավորությունը: Չնայած այն հանգամանքին, որ ներպետական իրավունքի մեկնաբանման և կիրառման հարցը առաջին հերթին ներպետական իշխանությունների, մասնավորապես՝ դատարանների խնդիրն է, այնուամենայնիվ 5-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ ներպետական օրենսդրության պահանջները չպահպանելը Կոնվենցիայի խախտում է և Դատարանը կարող է ու պետք է քննի, թե արդյոք ներպետական իրավունքի պահանջները պահպանվել են (տե՛ս, ի թիվս այլոց, *Benham v. the United Kingdom*, 1996 թվականի հունիսի 10, § 41, Ձեկույցներ վճիռների և որոշումների մասին 1996-III, և *Assanidze v. Georgia* [GC], թիվ. 71503/01, § 171, ՄԻԵԴ 2004-II): Կալանավորման ժամկետը սկզբունքորեն «օրինական» է, եթե այն հիմնվում է դատարանի որոշման վրա: Նույնիսկ կալանավորման մասին որոշման թերությունները անհրաժեշտաբար չեն հանգեցնում կալանքի տակ պահելու հիմնական ժամկետի անօրինականությանը՝ 5-րդ հոդվածի 1-ին կետի իմաստով (տե՛ս վերոնշյալ *Benham*-ի գործը, §§ 42-47, և *Jėčius v. Lithuania*, թիվ. 34578/97, § 68, ՄԻԵԴ 2000-IX):

54. Սույն գործում դատարանի կողմից որոշված՝ դիմումատուին երկամսյա կալանքի տակ պահելու ժամկետը պետք է լրանար 2007 թվականի փետրվարի 10-ին: ԲԴՕ-ի 139-րդ հոդվածի 1-ին մասով պահանջվում է, որ կալանքի տակ պահելու ժամկետը երկարացնելու անհրաժեշտության դեպքում քննիչը, ոչ ուշ, քան կալանքի տակ պահելու ժամկետը լրանալուց 10 օր առաջ, պետք է դատարան ներկայացնի և դատարանը, ոչ ուշ, քան կալանքի տակ պահելու ժամկետը լրանալուց 5 օր առաջ համապատասխան որոշում կայացնի: Դիմումատուի գործով քննիչը կալանքի տակ պահելու ժամկետը երկարացնելու միջնորդություն է ներկայավրել 2007 թվականի փետրվարի 1-ին, մինչդեռ, առաջին ատյանի դատարանը միջնորդությունը բավարարող և դիմումատուին կալանքի տակ պահելու ժամկետը երկու ամսով երկարացնելու իր որոշումն ընդունել է 2007 թվականի փետրվարի 7-ին:

55. Դատարանը նշում է, որ այն ժամանակ, երբ առաջին ատյանի դատարանը 2007 թվականի փետրվարի 7-ին որոշում էր կայացրել դիմումատուին կալանքի տակ պահելու ժամկետը երկարացնելու մասին, առաջին ատյանի դատարանի նախորդ, այն է՝ 2006 թվականի դեկտեմբերի 12-ի որոշման հիման վրա դիմումատուի կալանքը դեռ ուժի մեջ էր: Բացի այդ, չնայած, որ 2007 թվականի փետրվարի 7-ի որոշումը կայացվել էր կարճատև ուշացումով՝ այն, այնուամենայնիվ, կայացվել էր կալանքի տակ պահելու թույլատրված ժամկետը լրանալուց մի քանի օր առաջ: Այն ընդունվել էր իրավասու դատարանի կողմից՝ քննիչի միջնորդության հիման վրա՝ ինչպես որ պահանջվում է ներպետական օրենսդրությամբ: Դատարանը համարում է, որ գործի փաստական հանգամանքներում ենթադրյալ դատավարական թերությունները, այն է՝ քննիչի միջնորդությունը ներկայացնելու և քննության առնելու կարճատև ձգձգումները, ենթադրելով, որ դրանք տեղի էին ունեցել, այնքանով էին կրում ձևական և աննշան բնույթ, որ ոչ մի կերպ չէին կարող ազդել այդ որոշմամբ թույլատրված կալանքի ժամկետի օրինականության վրա:

56. Այստեղից հետևում է, որ գանգառի այս մասն ակնհայտորեն անհիմն է և պետք է մերժվի համաձայն Կոնվենցիայի 35-րդ հոդվածի 3-րդ կետի «ա» ենթակետի և 4-րդ կետի:

2. 2007 թվականի հունիսի 10-ից 22-ն ընկած ժամանակահատվածում կալանքի տակ պահելու օրինականությունը

57. Դատարանը նշում է, որ սույն բողոքը Կոնվենցիայի 35-րդ հոդվածի 3-րդ կետի (ա) ենթակետի իմաստով ակնհայտ անհիմն չէ: Դատարանն այնուհետև նշում է, որ այն անընդունելի չէ որևէ այլ հիմքով: Հետևաբար, այն պետք է հայտարարվի ընդունելի:

Բ. Գործի ըստ էության քննությունը

1. Կողմերի փաստարկները

58. Կառավարությունը պնդել է, որ դիմումատուին 2007 թվականի հունիսի 10-ից 22-ը կալանքի տակ պահելը կատարվել է օրենքի համաձայն, այն է՝ ՔԴՕ-ի 138-րդ հոդվածի 3-րդ մասը:

59. Դիմումատուն վիճարկել է այս պնդումը, նշելով, որ ՔԴՕ-ի 138-րդ հոդվածի 3-րդ մասը չի կարող օրինական հիմք համարվել իրեն կալանքի տակ պահելու համար:

2. Դատարանի գնահատականը

60. Դատարանը վերահաստատում է, որ Կոնվենցիայի 5-րդ հոդվածը երաշխավորում է ազատության և անձնական անձեռնմխելիության հիմնարար իրավունքները: Այդ իրավունքները՝ Կոնվենցիայի իմաստով, առաջնային նշանակություն ունեն «ժողովրդավարական հասարակությունում» (տե՛ս *De Wilde, Ooms and Versyp v. Belgium*, 1971 թվականի հունիսի 18, § 65, շարք «Ա» թիվ 12):

61. Երբ քննարկվում է ազատությունից զրկելու հարցը, հատկապես կարևոր է, որ պահպանվի իրավական որոշակիության ընդհանուր սկզբունքը: Հետևաբար, էապես կարևոր է, որ ներպետական իրավունքով ճշտագրիտ սահմանված լինեն ազատությունից զրկելու պայմանները և օրենքն ինքնին կանխատեսելի լինի կիրառության առումով, որպեսզի համապատասխանի Կոնվենցիայով սահմանված «օրինականության» չափանիշին, համաձայն որի պահանջվում է, որ ցանկացած ոք, անհրաժեշտության դեպքում համապատասխան խորհրդատվությամբ, հնարավորություն ունենա կանխատեսել իր գործողությունների հնարավոր հետևանքները՝ որքանով դա ողջամտորեն հնարավոր է տվյալ իրավիճակում (տե՛ս *Steel and Others v. United Kingdom*, 1998 թվականի սեպտեմբերի 23, § 54, Վճիռների և որոշումների մասին զեկույցներ 1998-VII):

62. Դատարանը նշում է, որ արդեն քննել է նմանատիպ բողոք ընդդեմ Հայաստանի այլ գործով, որում Դատարանը եզրակացրել է, որ խախտվել է Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 1-ին կետը, նկատի ունենալով, որ դիմումատուին կալանքի տակ պահելը հիմնված չի եղել դատարանի որոշման վրա, հետևաբար անօրինական էր տվյալ դրույթի իմաստով (տե՛ս Պողոսյանն ընդդեմ Հայաստանի, թիվ 44068/07, §§ 56-64, 2011 թվականի դեկտեմբերի 20): Դատարանը սույն գործով այլ եզրակացություն հանգելու պատճառ չի տեսնում և եզրակացնում է, որ դիմումատուին 2007 թվականի հունիսի 10-ից 22-ը կալանքի տակ պահելը 5-րդ հոդվածի 1-ին կետի իմաստով եղել է անօրինական:

63. Համապատասխանաբար, խախտվել է Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 1-ին կետը:

II. ԿՈՆՎԵՆՑԻԱՅԻ 5-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ 3-ՐԴ ԿԵՏԻ ԵՆԹԱԴՐՅԱԼ ԽԱԽՏՈՒՄ

64. Դիմումատուն բողոքել է, որ ներպետական դատարանները չեն կարողացել պատճառներ ներկայացնել իր շարունակական կալանավորման համար: Նա վկայակոչել է Կոնվենցիայի 5-րդ հեղվածի 3-րդ կետը, որը սահմանում է հետևյալը.

«3. Սույն հոդվածի 1-ին կետի «գ» ենթակետի դրույթներին համապատասխան ձերբակալված կամ կալանավորված յուրաքանչյուր ոք

անհապաղ տարվում է դատավորի կամ այլ պաշտոնատար անձի մոտ, որն օրենքով լիազորված է իրականացնել դատական իշխանություն և ունի ողջամիտ ժամկետում դատաքննության իրավունք կամ մինչև դատաքննությունն ազատ արձակելու իրավունք: Ազատ արձակումը կարող է պայմանավորվել դատաքննության ներկայացնելու երաշխիքներով:»:

Ա. Ընդունելիությունը

65. Դատարանը նշում է, որ սույն բողոքը Կոնվենցիայի 35-րդ հոդվածի 3-րդ կետի (ա) ենթակետի իմաստով ակնհայտ անհիմն չէ: Դատարանն այնուհետև նշում է, որ այն անընդունելի չէ որևէ այլ հիմքով: Հետևաբար, այն պետք է հայտարարվի ընդունելի:

Բ. Գործի ըստ էության քննությունը

1. Կողմերի փաստարկները

66. Կառավարությունը պնդել է, որ ներպետական իշխանությունները պատշաճ և բավարար հիմքեր են ներկայացրել դիմումատուի շարունակական կալանավորման համար, ինքչափսիք են քրեական վարույթ իրականացնող մարմնից թաքնվելու և դատավարության մեջ ներգրավված անձանց նկատմամբ անօրինական ազդեցություն գործադրելու վտանգը:

67. Դիմումատուն պնդել է, որ ներպետական դատարանները պատշաճ և բավարար հիմքեր չեն ներկայացրել իր շարունակական կալանավորման համար և նրանց պատճառաբանությունները, մասնավորապես, իր գործի հանգամանքների գնահատում չեն իրականացրել և անհիմն են եղել:

2. Դատարանի գնահատականը

(ա) հիմնական սկզբունքները

68. Հանցագործության համար մեղադրվողը մինչդատական վարույթի ընթացքում միշտ պետք է ազատ արձակվի, քանի դեռ պետությունը չի կարողացել ցույց տալ, որ շարունակական կալանավորման համար գոյություն ունեն «հիմնավոր և բավարար» պատճառներ: (տե՛ս *Smirnova v. Russia*, թիվ 46133/99 և 48183/99, § 58, ՄԻԵԿ 2003-IX (քաղվածքներ); *Becciev v. Moldova*, թիվ 9190/03, § 53, 2005 թվականի հոկտեմբերի 4, և *Khodorkovskiy v. Russia*, թիվ 5829/04, § 182, 2011 թվականի մայիսի 31):

69. Ներպետական դատարանները պետք է քննության առնեն բոլոր փաստերը, որոնք կողմ կամ դեմ են փաստարկում այնպիսի հանրային շահի իրական պահանջի առկայությանը, որը, հաշվի առնելով անձի անմեղության

կանխավարկածի սկզբունքը, արդարացնում է անձի ազատությունը հարգելու կանոնից կատարվող շեղումը, և պետք է դրանք ամրագրեն անձին ազատ արձակելու միջնորդությունների վերաբերյալ իրենց որոշումներում (տե՛ս *Letellier v. France*, 1991 թվականի հունիսի 26, § 35, շարք «Ա», թիվ 207): Ազատ արձակելուն կողմ կամ դեմ արված փաստարկները պետք է ընդհանուր և վերացական բնույթ չունենան (տե՛ս *Clooth v. Belgium*, 1991 թվականի դեկտեմբերի 12, § 44, շարք «Ա», թիվ 225):

70. Ձերբակալվածի կողմից հանցանք կատարած լինելու հիմնավոր կասկածի շարունակական գոյությունը անհրաժեշտ պայման է (*sine qua non*) տևական կալանքի օրինականության համար, սակայն որոշ ժամանակ անց այն դառնում է ոչ բավարար: Նման դեպքերում Դատարանը պետք է պարզի, թե արդյոք դատական մարմինների կողմից ներկայացված այլ հիմքերով շարունակվում է հիմնավորվել ազատությունից զրկելը: Եթե այդօրինակ հիմքերը «հիմնավոր» և «բավարար» են, Դատարանը պետք է պարզի նաև, թե քննությունն իրականացնելիս իրավասու ներպետական մարմինները արդյոք դրսևորել են «պատշաճ ջանասիրություն» (տե՛ս *Labita v. Italy* [ՄԴ], թիվ 26772/95, § 153, ՄԻԵԿ 2000-IV):

71. Կոնվենցիայի նախադեպային իրավունքը մշակել է հանցագործության համար կասկածվող անձին մինչև դատավճիռը կալանքի տակ պահելու համար ընդունելի չորս հիմնական հիմքեր. մեղադրյալի՝ դատաքննությանը չներկայանալու վտանգը (տե՛ս *Stögmüller v. Austria*, 1969 թվականի նոյեմբերի 10, § 15, շարք «Ա», թիվ 9), վտանգը, որ մեղադրյալը ազատ արձակվելու դեպքում կխոչընդոտի արդարադատության իրականացմանը, (տե՛ս *Wemhoff v. Germany*, 1968 թվականի հունիսի 27, § 14, շարք «Ա», թիվ 7) կամ կկատարի նոր հանցանքներ (տե՛ս *Matznetter v. Austria*, 1969 թվականի նոյեմբերի 10, § 9, շարք «Ա», թիվ 10) կամ կկատարի հասարակական անկարգություններ (տե՛ս *Letellier-ի* գործը, վերևում մեջբերված, § 51):

72. Քրեական վարույթն իրականացնող մարմնից թաքնվելու վտանգավորության աստիճանը չի կարող չափվել միայն նախատեսվող պատժի խստության հիման վրա: Այն պետք է գնահատվի մի շարք այլ վերաբերելի գործոնները հաշվի առնելով, որոնք կարող են կա՛մ հաստատել քրեական վարույթն իրականացնող մարմնից թաքնվելու վտանգի առկայությունը, կա՛մ կարող են այն դարձնել այնքան չնչին, որ հնարավոր չլինի հիմնավորել կալանքը նախքան դատական քննությունը (տե՛ս *Yağci and Sargin v. Turkey*, 1995 թվականի հունիսի 8, § 52, շարք «Ա», թիվ 319Ա): Քրեական վարույթն իրականացնող մարմնից թաքնվելու վտանգը պետք է գնահատվի այնպիսի հանգամանքների լույսի ներքո, ինչպիսիք են անձի բնութագիրը, նրա բարոյականությունը, տուն ունենալու հանգամանքը, զբաղվածությունը, ունեցվածքը, ընտանեկան կապերը, ինչպես նաև բոլոր կապերն այն պետության հետ, որում նա հետապնդվում: Ծանր պատժի ակնկալիքը և ապացույցների ծանրակշիռ լինելը կարող են վերաբերելի լինել,

սակայն որպես այդպիսին որոշիչ չեն, և հնարավոր է, որ անհրաժեշտ լինի օգտագործել երաշխիքներ ստանալու հնարավորությունը՝ բոլոր վտանգները չեզոքացնելու նպատակով (տե՛ս *Neumeister v. Austria*, 1968 թվականի հունիսի 27, § 10, շարք «Ա», թիվ 8):

73. Մեղադրյալի կողմից վարույթի պատշաճ ընթացքը խոչընդոտելու վտանգի վրա չի կարելի հիմնվել վերացական կարգով (*in abstracto*). այն պետք է հիմնավորել փաստական սովյալներով (տե՛ս *Trzaska v. Poland*, թիվ 25792/94, § 65, 2000 թվականի հուլիսի 11):

(բ) Վերոհիշյալ սկզբունքների կիրառությունը սույն գործով

74. Սույն գործով Դատարանը նշում է, որ ներպետական դատարանները, սանկցավորելով դիմումատուի կալանավորումը և դրա ժամկետի երկարացումը, հիմնվել են վերջինիս՝ քրեական վարույթն իրականացնող մարմնից թաքնվելու և արդարադատության իրականացմանը խոչընդոտելուն ուղղված գործողություններ ձեռնարկելու ռիսկի վրա, ինչպիսին է, վկաների վրա անօրինական ազդեցություն գործադրելը:

75. Դատարանը նկատում է, որ և՛ առաջին ատյանի, և՛ վերաքննիչ դատարանները իրենց որոշումներում սահմանափակվել են այս հիմքերը վերացարկված և կարծրատիպային եղանակով կրկնելով, առանց մատնանշելու որևէ պատճառ այն մասին, թե ինչու՞ են նրանք հիմնավոր համարում իրենց պնդումներն այն մասին, թե դիմումատուն կարող է թաքնվել քրեական վարույթն իրականացնող մարմնից կամ անօրինական ազդեցություն գործադրել վկաների նկատմամբ: Նրանք նաև չեն փորձել հերքել դիմումատուի ներկայացրած փաստարկները: Դիմումատուին մեղսագրվող արարքի ծանր հանցագործություն լինելու ընդհանուր վկայակոչումը չի կարող բավարար հիմնավորում համարվել ենթադրյալ ռիսկերի համար: Հստակ չէ նաև, թե ինչպե՞ս կարող էր դիմումատուի գործով մյուս մեղադրյալի կալանավորված լինելու փաստը, որի վրա հիմնվել է վերաքննիչ դատարանը՝ գրավի դիմաց ազատ արձակելու վերաբերյալ դիմումատուի միջնորդությունը մերժելիս (տե՛ս վերևում, § 22), հիմնավոր լինել քրեական վարույթն իրականացնող մարմնից դիմումատուի թաքնվելու ռիսկն արդարացնելու համար:

76. Վերոնշյալի լույսի ներքո Դատարանը համարում է, որ այն պատճառները, որոնց վրա՝ իրենց որոշումներում հիմնվել են առաջին ատյանի և քրեական ու զինվորական գործերով վերաքննիչ դատարանը՝ դիմումատուի կալանավորման և դրա ժամկետի երկարացման հետ կապված, «հիմնավոր» և «բավարար» չէին:

77. Համապատասխանաբար խախտվել է Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 3-րդ կետը:

III. ԿՈՆՎԵՆՑԻԱՅԻ 5-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ 4-ՐԴ ԿԵՏԻ ԵՆԹԱԴՐՅԱԼ ԽԱԽՏՈՒՄ

78. Դիմումատուն բողոքել է, որ ինքը ոչ մի նիստի ներկա չի գտնվել, որում որոշում է կայացվել իրեն կալանքի տակ պահելու ժամկետը երկարացնելու հարցը: Նա վկայակոչել է Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 1-ին կետը: Դատարանը գտնում է, որ այս բողոքը պետք է ուսումնասիրվի Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 4-րդ կետի համաձայն, որը սահմանում է հետևյալը.

«4. Յուրաքանչյուր ոք, ով ձերբակալման կամ կալանավորման պատճառով զրկված է ազատությունից, իրավունք ունի վիճարկելու իր կալանավորման օրինականությունը, որի կապակցությամբ դատարանն անհապաղ որոշում է կայացնում և կարգադրում է նրան ազատ արձակել, եթե կալանավորումն անօրինական է:»:

Ա. Կողմերի փաստարկները

1. Կառավարությունը

79. Կառավարությունը պնդել է, որ ՔԴՕ-ի 285-րդ հոդվածի 2-րդ մասը կալանավորի ներկայությունը պարտադիր է համարում միայն կալանավորման հարցով դատական առաջին նիստի ժամանակ և ոչ այն նիստերին, որոնցում որոշվում է կալանքի տակ պահելու ժամկետի երկարացման հարցը: Դիմումատուի պաշտպանը ներկա է եղել կալանքի ժամկետը երկարացնելու բոլոր նիստերին և հնարավորություն է ունեցել ներկայացնել փաստարկներ և միջնորդություններ, անել գրավոր պնդումներ: Հետևաբար դիմումատուի բացակայությունը համապատասխան դատական նիստերից որևէ կերպ բացասական ազդեցություն չի ունեցել նրա իրավունքների վրա: Բացի այդ դիմումատուն երբեք անձամբ կամ իր պաշտպանի միջոցով ցանկություն չի հայտնել մասնակցել նիստերին: 2007 թվականի փետրվարի 7-ի նիստին պաշտպանը պարզապես ենթադրել է, որ դիմումատուն կցանկանար ներկա գտնվել: Ի վերջո հետևում է, որ 5-րդ հոդվածի 4-րդ կետի խախտում տեղի չի ունեցել:

2. Դիմումատուն

80. Դիմումատուն պնդել է, որ ՔԴՕ-ի 285-րդ հոդվածը կիրառելի է նաև իրեն կալանքի տակ պահելու ժամկետը երկարացնելու հետ կապված նիստերի հանդեպ: Սա հստակորեն հաստատվել է դատական պրակտիկայի կողմից, ինչպես նաև այն փաստով, որ առաջին ատյանի դատարանը իր որոշումներում հղում է կատարել այդ հոդվածի վրա: Ուստի ներպետական օրենսդրությունը պարտադիր է համարում իր ներկայությունը և այն

չապահովելը զրկել է իրեն առաջին ատյանի դատարանի առաջ իր դիրքորոշումը ներկայացնելու հնարավորությունից: Քննությունը եղել է ոչ մրցակցային և չի ապահովել կողմերի իրավահավասարությունը՝ դրանով իսկ խախտելով 5-րդ հոդվածի 4-րդ կետը:

Բ. Դատարանի գնահատականը

81. Դատարանը վերահաստատում է, որ որոշակի հանգամանքներում 5-րդ հոդվածի 4-րդ կետը կարող է պարտադիր համարել կալանավորի ներկայությունը բանավոր նիստին (տե՛ս *Singh v. the United Kingdom*, 1996 թվականի փետրվարի 21, §§ 67-69, Ձեկույցներ վճիռների և որոշումների մասին 1996-1, *Graužinis v. Lithuania*, թիվ 37975/97, §§ 33-34 2000 թվականի հոկտեմբերի 10, *Waite v. the United Kingdom* թիվ 53236/99, § 59, 2002 թվականի դեկտեմբերի 10, *Lebedev v. Russia* թիվ 4493/04, § 113, 2007 թվականի 25, վերոնշյալ *Khodorkovskiy v. Russia*, § 235):

82. Սույն գործում դիմումատուն ներկա չի եղել 2007 թվականի փետրվարի 7-ին և ապրիլի 5-ի նիստերին, որոնցում առաջին ատյանի դատարանը որոշում է կայացրել երկարացնել իրեն կալանքի տակ պահելու ժամկետը կամ 2007 թվականի մարտի 1-ի և մայիսի 2-ի նիստերին, որոնցում վերաքննիչ դատարանը քննել է այդ որոշումների դեմ բերված բողոքները: Դատարանը չի կիսում դիմումատուի այն կարծիքը, որ ՔԴՕ-ի 285-րդ հոդվածը պարտադիր է համարում իր ներկայությունը այդ նիստերին: Ինչպես հետևում է այդ հոդվածի տեքստից, ինչպես նաև ներպետական դատարանների կողմից դրա մեկնաբանությունից, կալանավորի ներկայությունը պարտադիր է միայն այն նիստերին, որոնցում կալանքը նշանակվում է որպես խափանման միջոց և ոչ այն նիստերին, որոնցում կալանքի տակ պահելու ժամկետը երկարացվում է: Դիմումատուի պնդումն առ այն, որ դատական պրակտիկայում նման մոտեցում է ձևավորել չի հիմնավորվել որևէ ապացույցով: Բացի այդ այն փաստը, որ առաջին ատյանի դատարանը իր որոշման մեջ հղում է կատարել 285-րդ հոդվածին, չի ազդում իրավիճակի վրա: Այս հոդվածն իսկապես կիրառելի է ինչպես կալանքը որպես խափանման միջոց կիրառելու, այնպես էլ կալանքի տակ պահելու ժամկետը երկարացնելու նկատմամբ: Այնուամենայնիվ, հատուկ պահանջները, որոնք սահմանված են այդ հոդվածի 2-րդ մասով կիրառելի են միայն առաջինի նկատմամբ: Այսպիսով՝ չի կարելի պնդել, որ ներպետական օրենսդրությունը պարտադիր է համարում կալանավորի ներկայությունը կալանքի տակ պահելու ժամկետը երկարացնելու հարցի որոշման նիստերին:

83. Դատարանը նշում է, որ դիմումատուի պաշտպանը ներկա է գտնվել քննարկվող նիստերին: Նա հնարավորություն է ունեցել ներկայացնելու դիմումատուի գործը և նրան ազատ արձակելու օգտին պնդումներ անելու: Դատարանը, այնուհետև, նշում է, որ դիմումատուն չի հստակեցրել, թե ինչու՝

էր իր ներկայությունն անհրաժեշտ քննարկվող նիստերին: Նման հանգամանքներում Դատարանը բավարար հիմքեր չունի եզրակացնելու, որ այն կարգը, որով անցկացվել են համապատասխան նիստերը, խախտել է 5-րդ հոդվածի 4-րդ կետի համաձայն դիմումատուի՝ բանավոր քննության իրավունքը:

84. Այստեղից հետևում է, որ գանգատի այս մասն ակնհայտորեն անհիմն է և պետք է մերժվի համաձայն Կոնվենցիայի 35-րդ հոդվածի 3-րդ կետի (ա) ենթակետի և 4-րդ կետի:

IV. ԿՈՆՎԵՆՑԻԱՅԻ ԱՅԼ ԵՆԹԱԴՐՅԱԼ ԽԱԽՏՈՒՄՆԵՐ

85. Վերջապես, դիմումատուն ներկայացրել է նաև մի շարք այլ բողոքներ՝ Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 1-ին կետի, 10-րդ և 14-րդ հոդվածների և Կոնվենցիային կից թիվ 1 Արձանագրության 3-րդ հոդվածի ներքո:

86. Իր տրամադրության տակ գտնվող բոլոր նյութերի լույսի ներքո և այնքանով, որքանով այդ բողոքները գտնվում են իր դատազրույթության ներքո՝ Դատարանը գտնվում է, որ դրանցով չի բացահայտվում Կոնվենցիայով սահմանված իրավունքների և ազատությունների առերևույթ խախտման որևէ դեպք: Այսպիսով հետևում է, որ գանգատի այս մասը պետք է մերժվի ակնհայտ անհիմն լինելու պատճառով՝ համաձայն Կոնվենցիայի 35-րդ հոդվածի 3-րդ և 4-րդ կետերի::

V. ԿՈՆՎԵՆՑԻԱՅԻ 41-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ ԿԻՐԱՌԵԼԻՈՒԹՅՈՒՆԸ

87. Կոնվենցիայի 41-րդ հոդվածով նախատեսվում է՝

«Եթե Դատարանը գտնում է, որ տեղի է ունեցել Կոնվենցիայի կամ դրան կից Արձանագրությունների խախտում, իսկ համապատասխան Բարձր պայմանավորվող կողմի ներպետական իրավունքն ընձեռում է միայն մասնակի հատուցման հնարավորություն, ապա Դատարանը որոշում է, անհրաժեշտության դեպքում, տուժած կողմին արդարացի փոխհատուցում տրամադրել:»:

Ա. Վնասը

88. Դիմումատուն պահանջել է 108.000 եվրո՝ որպես ոչ նյութական վնասի փոխհատուցում:

89. Կառավարությունն առարկել է այդ պահանջը:

90. Դատարանը գտնում է, որ դիմումատուն հայտնաբերված խախտումների արդյունքում, անկասկած, կրել է ոչ նյութական վնաս և որոշում է այդ վնասի դիմաց նրան փոխհատուցել 4500 եվրո:

Բ. Ծախսեր և ծախքեր

91. Դիմումատուն նաև պահանջել է 20.000 ՀՀ դրամ՝ որպես իր փոստային ծախքեր:

92. Կառավարությունն առարկել է այս պահանջի դեմ, պնդելով, որ դիմումատուն նման թանկարժեք փոստային ծառայություններից օգտվելու կարիք չունի:

93. Դատարանի նախադեպային իրավունքին համապատասխան՝ դիմումատուն ունի ծախսերի ու ծախքերի փոխհատուցման իրավունք՝ այնքանով, որքանով ցույց է տրվել, որ դրանք իրականում կատարվել են, եղել են անհրաժեշտ, և դրանց չափը եղել է ողջամիտ: Դատարանը ողջամիտ է համարում տրամադրել 43 եվրո որպես Դատարանում քննության ընթացքում կատարված ծախքերի և ծախսերի փոխհատուցում:

Գ. Չկատարման դեպքում հաշվարկվող տոկոսադրույք

94. Դատարանը պատշաճ է համարում, որ չկատարման դեպքում հաշվարկվող տոկոսադրույքը պետք է հիմնվի Եվրոպական կենտրոնական բանկի սահմանած փոխառության առավելագույն տոկոսադրույքի վրա, որին պետք է գումարվի երեք տոկոսային կետ:

ԱՅՍ ՀԻՄՆԱՎՈՐՄԱՄԲ ԴԱՏԱՐԱՆԸ ՄԻԱԶԱՅՆ՝

1. Հայտարարում է, որ ներկայացված բողոքները՝ 2007 թվականի հունիսի 10-ից 22-ը դիմումատուին կալանքի տակ պահելու անօրինականության ու իր շարունակական կալանավորման հիմքերի բացակայությանը վերաբերյալ ընդունելի է, իսկ գանգատի մնացած մասն՝ անընդունելի:

2. Վճռում է, որ տեղի է ունեցել Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 1-ին կետի խախտում, նկատի ունենալով, որ 2007 թվականի հունիսի 10-ից 22-ը դիմումատուին կալանքի տակ պահելը իրավական հիմք չի ունեցել:

3. Վճռում է, որ տեղի է ունեցել Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 3-րդ կետի խախտում՝ շարունակական կալանավորման հիմնավոր և բավարար պատճառներ չներկայացնելու առումով:

4. Վճռում է.

(ա) պատասխանող Պետությունը, վճիռը Կոնվենցիայի 44-րդ հոդվածի 2-րդ կետի համաձայն ուժի մեջ մտնելուց հետո երեք ամսվա ընթացքում դիմումատուին պետք է վճարի հետևյալ գումարները, որոնք պետք է փոխարկվեն պատասխանող Պետության ազգային արժույթով՝ վճարման օրը գործող փոխարժեքով:

(i) ոչ նյութական վնասի դիմաց՝ 4500 եվրո՝ գումարած նշված գումարի վրա հաշվարկվող որևէ տեսակի հարկեր

(ii) ծախսերի և ծախքերի դիմաց՝ 43 եվրո՝ գումարած նշված գումարի վրա հաշվարկվող որևէ տեսակի հարկեր

(բ) վերը նշված եռամսյա ժամկետի ավարտից հետո մինչև վճարման օրը պետք է վճարվի վերը նշված գումարի պարզ տոկոս՝ պարտավորությունների չկատարման ժամանակահատվածում Եվրոպական կենտրոնական բանկի սահմանած փոխառության առավելագույն տոկոսադրույքի չափով՝ գումարած երեք տոկոսային կետ.

5. Մերժում է դիմումատի՝ արդարացի փոխհատուցման պահանջի մնացած մասը:

Կատարված է անգլերենով և գրավոր կերպով ծանուցվել է 2012 թվականի հունիսի 26-ին՝ համաձայն Դատարանի կանոնակարգի 77-րդ կանոնի 2-րդ և 3-րդ կետերի:

Santiago Quesada
Քարտուղար

Josep Casadevall
Նախագահ